

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 7 կոպեկով.

Քիֆիլիում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе. Редакция «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իշխանաւոր և կուսակցութիւն.—Ներքին Տեսչութիւն. Ընտրողների շուրջը. Բաց նաեւ կաւարամիտների բանակին. Նամակ Եւրոպայ. Նամակ Խմբագրութեան. Ներքին Լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հեռագրի մասին. Կարգի մասին. Ամուսնական նոր օրէնք. Արտաքին Լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Ֆինլանդիայից.

ԻՇԽԱՆԱՌՐ ԵՒ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Ամեն մարդ լինի նա մասնաւոր անհատ, թէ իշխանաւոր, բարձրագոյն պաշտօնային թէ հասարակ գործող.—Իր համար մուշեքներով և զարգացմանով կարող է պատկանել այս կամ այն կուսակցութեան: Մեր միանգամայն համաձայն չենք այն կ երկուսը մտքի հետ, թէ իշխանաւորը, պաշտօնեան, լինի նա մի դպրոցի տեսուչ, առաջնորդ, կամ նոյն կամ կաթողիկոս, չը պէտք է համարել այս կամ այն կուսակցութեան, այլ նա պէտք է դուրս լինի ամեն տեսակ կուսակցութիւններից:

Այդ կարծիքը ճիշդ կը լինի, եթէ օրինակ, մեր մէջ գոյութիւն ունեցող կուսակցութիւնները հիմնոված լինէին լոկ անձնական յարաբերութիւնների, լոկ պատահական բաժանումների վրա: Սակայն քանի որ կուսակցական շարժումը հայոց կեանքի մէջ մի պատահական, դիպուածական երեւոյթ չէ, այլ մի այնպիսի երեւոյթ, որ ունի ամբողջ քան տարրայ պատմութիւն, ընդգրկում է ամբողջ հայոց հասարակութիւնը, իր բոլոր հիմնարկութիւններով, այդ պատճառով հասկանալի է, թէ ինչու նոյն իսկ ամենաբարձր պաշտօնեաներն էլ կամայ կաւանայ, իրանց ուղղութեամբ, իրանց հայեացքներով և ձգտումներով պէտք է համարեն, կամ նոյն իսկ պատկանեն այս կամ այն կուսակցութեան:

Սրանից քան, քանհինգ տարի առաջ, երբ հայոց կեանքի մէջ չը կային որոշ միմանցից միանգամայն տարբեր ուղղութեան պատկանող կուսակցութիւններ, այն ժամանակ հարց էլ չէր կարող լինել այն մասին, թէ ինչ կուսակցութեան է համարում, կամ պատկանում կաթողիկոսը, առաջնորդը, կամ ղեկուղ մի թեմական տեսուչ:

Սակայն վերջին տասն, տասնհինգ տարեկայ մէջ գործերի զրուծիւնը բոլորովին փոխվեց.—1884 թւին, կաթողիկոսական ընտրութեան ժամանակ, առաջին անգամ կուսակցութիւնները հանգէս եկան բոլորովին տարբեր պրոպագանդայի և գանազան կանդիդատներով: առաջգրվական՝ մշակական կուսակցութիւնը՝ Ներսէս Արժապետեանի թեկնածութեամբ, իսկ խաւարամիտ, մեղրական կուսակցութիւնը՝ հանգուցեալ Մակարի թեկնածութեամբ: Յաջորդ 1885 թւին խաւարամիտ, մեղրական կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ և կաթողիկոսական գահը բարձրացաւ Մակարը, որը իր անցեալով մտքերով և ուղղութեամբ պատկանում էր «մեղրականներին» բանակին: Կրա հակառակ, վերջին կաթողիկոսական ընտրութեանը 1892 թւին, առաջգրվական կուսակցութիւնը հրապարակ եկաւ Նորմանի թեկնածութեամբ և կարողացաւ փառաւոր կերպով աջողեցնել նրա ընտրութիւնը:

Մեր յիշատակիցը այդ փաստերը ցոյց տաւ համար, թէ քանի որ նոյն իսկ մի այնպիսի նշանաւոր ընտրութիւն, ինչպիսին է կաթողիկոսի ընտրութիւնը, կատարվում է կուսակցական պայքարով, բնական է, որ ինքը կաթողիկոսը, ուր մնաց թէ նրանից աւելի ցածր պաշտօնեաները, իրանց ուղղութեամբ և համոզմունքներով համակրելի կամ հակակրելի պիտի լինեն այս կամ այն կուսակցութեան, պէտք է համարեն այս կամ այն կուսակցութեան:

Սակայն համոզմունքով և ուղղութեամբ համակրել կամ նոյն իսկ պատկանել այս կամ այն կուսակցութեան, դու չէ նշանակում գործիք լինել այս կամ այն կուսակցութեան ձեռքում:

Իւրաքանչիւր պաշտօնեայ, լինի նա կաթողիկոս, թէ առաջնորդ՝ իբրև մարդ, իբրև անհատ, իր հակումների իր հայեացքներով կարող է համակրել մի կուսակցութեան, և հակակրել միւրին.—բայց այդ դու չէ նշանակում, թէ նա, իբրև պաշտօնեայ, իբրև իշխանաւոր, իր իրաւունքները և օրէնքը պէտք է գործ դնի յօգուտ մի կուսակցութեան, ի վնաս միւրին:

Հէնց դրանում է կայանում մասնաւոր անհատի և իշխանաւորի տարբերութիւնը: մասնաւոր անհատը իր ամբողջ էութեամբ, իր մտքերի ամբողջ ոյժով կարող է պատկանել որ և է կուսակցութեան և ծառայել նրա շահերին, նրա նպատակներին, մինչև

դու իւրաքանչիւր պաշտօնեայ, իւրաքանչիւր իշխանաւոր, ով և լինի նա—պէտք է միշտ յիշել, թէ որտեղ են վերջանում իր անձնական, անհատական իրաւունքները և որտեղ են սկսվում իր այն պարտաւորութիւնները, որ դուռ է նրա վրա իր պաշտօնը, իր ստանձնած կոչումը:

Բերնը մի քանի օրինակներ: Մակար կաթողիկոսը ընտրվեց խաւարամիտների ջանքերով և նրանց ուղղութեան էր պատկանում: Նա իրաւունք ունէր խօսքով, զրբով տարածել իր հայեացքները իրաւունք ունէր շրջապատել իրան իր կուսակցութեան մարդկանցով, լսել նրանց խորհուրդներին, դիմաւորվել նրանց ասածներով:—Եւ այդպէս էլ անում էր:

Բայց ինչ կատեղը նոյն Մակար կաթողիկոսին, եթէ, օրինակ, նա ոտի տակ տար գոյութիւն ունեցող օրէնքը, կանօնը, պարտաւորութիւնը, և ամեն մի վճիռ կայացնելիս՝ հարցնէր, թէ ո՞ր կուսակցութեան է պատկանում իրան դիմողը, զանգատաւորը և դրա համաձայն էլ իր վճիռը տար:

Ինչ կատեղը, ղեկուղ, եթէ օրինակ, Արժապետ Նորման, ընտրված լինելով առաջգրվական կուսակցութեան ձեռքով, էջմիածին գար թէ չէ, հետագային Սուքիաս եպիսկոպոսին, հարածէր Սուքիասն եպիսկոպոսին, միմայն այն պատճառով, որ նրանք պատկանում են հակառակ կուսակցութեան, առանց քննելու նրանց գործերը, առանց դատելու սրան կամ նրան, համաձայն իրանց գործերին:

Կա անկարելի է և այդպէս անել կը նշանակի խառն և իշխանութեան պարտաւորութիւնները և նրանք անհատական հակումների և հայեացքների հետ, կը նշանակէ օրէնքը, կանօնը, իրաւունքը գործիք դարձնել մի կուսակցութեան ձեռքում, ի վնաս միւրին:

Կրկնում ենք, ամեն մի մարդ, ով և լինի նա, ուրեմն է ամեն մի պաշտօնեայ, իրաւունք ունեն իրանց հայեացքներով համակրել այս և այն կուսակցութեան, բայց առանց մի պաշտօնեայ լինի նա կաթողիկոս, առաջնորդ թէ եկեղեցու վերջին սպասաւոր, պաշտօնավարութեան մէջ պարտաւոր են և պէտք է դիմաւորվեն միմայն օրէնքով:

Օրէնքը կուսակցական լինել չէ կարող. կուսակցական չը պէտք է լինի և օրէնքի գործադրողը կամ նրա վրա հակողը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԾՈՌՔԸ

Լրացուցիչ ընտրութիւններն էլ վերջացան: Համեստութեան կանօնի հակառակ է, բայց և այնպէս թագցնել չենք կարող.—այդ օրն էլ, յունիսի 26-ին, խաւարամիտ բանակը վերջնական պարտութիւն կրեց: Թէ էջմիածնեցոց եկեղեցում, թէ Ս. Նշանում, և թէ վերջապէս Հրեշտակապետաց եկեղեցում, որտեղ վերջնաւորութիւն էր նշանակած, մեր կուսակցութեան բոլոր թեկնածուներն էլ անցան, և անցան ձայների անպակն մեծամասնութեամբ:

Հակառակորդները այնքան իրարանցումը, զեղծումները յետոյ դէժ կարողանային մի եկեղեցում յաղթել, դէժ կարողանային մի կանդիդատ անցկացնել:

Սակայն և ոչ մէկը:

Վերջնորդութիւն Հրեշտակապետաց եկեղեցում, բայց ինչու համար, ինչ պատճառով, ինչ անկանօնութեան համար.—այդ մասին և ոչ մի խօսք: Երբ Վեհալուսը քանդեց 1893 թւին ընտրութիւնը, մենք այն միտքը յայտնեցինք, որ ցանկալի է լսել բեկման պատճառները, թիրիմացութիւնների առիթ չը տալու համար: Եւ կաթողիկոսական կոնգրակի մէջ կային մի քանի, թէ և մութ, բացատրութիւններ բեկման մասին:

Նոյնը կատեղը և այս դէպքում. կատեղը և միշտ: Առաջնորդը բեկմանում է մի ընտրութիւն: Լաւ Ժողովուրդը հրաւիրում է եկեղեցի նոր ընտրութեան համար: Բայց նոյն ժողովուրդը ուղղում է և պէտք է իմանայ, թէ ինչու է քանդված առաջին ընտրութիւնը: Այդպէս է թեւադրում ժողովուրդի իրաւունքը, այդպէս է թեւադրում և օրէնքը:

Այս թէ ոչ կարելի է անվերջ ընտրութիւններ քանդել, նորերը նշանակել, զեղծումների պատճառ տալ:

Եւ մինչև այժմ էլ ոչ ոք չը դիտէ, թէ ինչու է բեկված Հրեշտակապետի առաջին ընտրութիւնը: Այդ սխտեմին հետևելով, կարելի է վաղը քանդել և Մոզու ընտրութիւնը, միւս օրը Վանքի ընտրութիւնը, երբոր օրը մի այլ ընտրութիւն և այլն: Ընտրութիւն քանդելու համար պէտք է օրինական պատճառաբանութիւն լինի և այդ պատճառաբանութիւնը պէտք է կարգապի ժողովրդի առաջ, վերջնորդութեան օրը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿՆԵՐ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻՑ

V.

Բաւական է մի հարանցիկ հայեացք գցել աշխարհագրական քարտէզի վրա, որ տեսնելք թէ Ֆինլանդիան որքան անաբող ղիբը ունի երկրագնդի վրա: Նա թաղված, լարված է հիւսիսային սառնամանիքների մէջ, որ ամառը թիֆլիսի դարձնելից աւելի ցուրտ և կարճատե է և այդ պատճառով էլ ցորեն ընաւ չէ բուսնում, պտղատու ծառեր չը կան, գարին ու համարը հազար ու մէկ դժուարութիւններով և վտանգներով են հասնում:

Բայց անէջ արանց բարձրութիւնը, ուսումը, զարգացումը, ընդհանուր առաջադիմութիւնը և լուսաւորութիւնը: Այս ինչումն է կայանում Ֆինլանդացիների կայսրազական ոյժը, որ բեռնային շրջանի այս և այն կողմն ընկած, որ խոր ձմրան ժամանակը արեգակը հորիզոնի տակից շարժվելով դուրս չէ գալիս և երկիրն էլ լի է ճահիճներով ու տիպերով, լիճներով և լճակներով, որ միայն արջեր, գայլեր կարող են

ապրել, սրանք այնքան դարգացել ու հարստացել են, որ Եւրոպայի երկրի հետ որ ուղեք կարող էք սրանց համեմատել լուսաւորութեան կողմից: Պէտք է անձամբ գալ այստեղ, աչքով տեսնել ու այնպէս համոզվել, եթէ ոչ գրելով ամեն բան չէ կարելի ասել:

Ֆինլանդացիների առաջին յատկութիւնը, որ օտարի աչքին է ընկնում, աշխատասիրութիւնն է: Գործում և միշտ գործում են: Պարսպմարդ չէք տեսնի, ամենքն էլ զբաղված են, այն էլ ամբողջ տարին: Տօն օրեր շատ քիչ ունեն, տարին 3 կամ 4 օր: Անա դա է պատճառը, որ կիրակին էլ շատ քաղցր է Ֆինլանդացու համար: Նա այդ օրը վայելում է արժանաւոր կերպով: Գինեմեները, խմիչքները վաճառանոցները վաճվում են բոլորովին՝ արդէն շարժել երկիրայն և կանանցով, ուր ընդհանուր համառօտ պաշտամունքից յետոյ, օրին մասնակցում են բոլոր ներկայ եղողները միասին երգելով, սկսվում է կենդանի խօսքը, որով քարոզիչը խրատում, յորտրում, յանդիմանում, խրատուում և մխիթարում է ունկնդիրներին: Ֆինլանդիայի երկու միլիօն ժողովուրդը ունի

աւելի քան հազար հողերականներ. ամենքն էլ, առանց բացառութեան, ուսեալ համալսարանականներ են, և առաջ վերջացրել են դիմաւորայի դասընթացը: Բուն աստածաբանութիւն սկսելուց առաջ, աստածաբանացուները պէտք է լինիսօփայութեան կանդիդատի ընտրութիւն տան:

Հասարակ երեց դառնալ ուղղող սովորում է 3 տարի աստածաբանութիւն և դառնում է նախ և առաջ մի ուրիշ հասակաւոր երեցի օգնական. և որպէս զի նա կարողանայ երեց դառնալ, կամ աւաղ երեցի պաշտօն ստանալ, պէտք է որոշ ժամանակ գործնականապէս աշխատած, ժողովրդի պէտքերի ու կայութեան հետ ծանօթացած և միանգամայն ուրիշ մի քանի աստածաբանական բարձրագոյն դիմութիւններով էլ առանձնապէս իրան համար զբաղված լինի: Ծոյլը, անշնորհները միշտ օգնական են մնում, կամ այդ պաշտօնն էլ են կորցնում, իսկ ժիբերը, ընդունակները և աշխատանքները առաջադիմում են և պատուի արժանում: Ահա այս տեսակ ուսեալ դիմանական երեցները, որոնք ոչ թէ միայն ա գաււմ են թէ հասարակ զեղացել, թէ կրթված քաղաքային համայնքներն, այլ թէ նրանց և թէ սրանց հաւատարմապէս անհրաժեշտ պէտք են, —ժողովուրդը հանգստութեան օրը լսում է մատ-

չելի, կրթիչ քարոզներ, որ բարձրացնում է միտքը, մեղիքարում սխալը, աղնուացնում զգացումները: Տեղ տեղ կը տեսնէք՝ աշխարհականներ են քարոզ ասում: Կան որիշ տեղեր էլ կը տեսնէք, որ մասնաւոր անձինք, մարդիկ և կանայք, 8—15 տարեկան երկխաններն ժողոված և տալը տալը հողու բաժանած, մեծ դահլիճներում, կիրակիօրեայ կրօնական դպրոցներ են կառավարում:

Կիրակի երկօրները, ամեն մէկը իր ուղած կերպով է անցկացնում իր ժամանակը կամ իր, կամ բարեկամի տանը, կամ մի ուրիշ զբօսաւայրում: Մանաւանդ շատ յաճախողներ ունեն արեցողութեան դիմաւորող ընկերութիւնները՝ «общества трезвости», որ հօրիւրաւոր անձինք են գալիս՝ երգ, երաժշտութիւն, ճառեր լսում, ընդհանուր խնդիրների վրա մտածում, խօսում, վիճում, վիճարանում և դուրսանում: Այստեղ խում են թէ, կաթ, շօկօլադ մի կտոր կարգահացով կամ մի ուրիշ թեթիւ բան: Այսպէս զօրացած, դուրսբացած, հանգստացած գնում և քննարկում իր գործին, իր հայտ աշխատանքին: Բայց այս աչքի ընկնող յատկութիւնից, ֆինլանդացիները ճշմարիտ հայրենասէրներ են: Ինչ որ

Ընտրութիւններ քանդելու առիթ չը կայ... քայքայ նախագահող քահանաներին զսպելու առիթ՝ որքան կամենաք:

Բոլոր ընտրութիւններէ ժամանակ ժողովուրդը իրան պահել է ամենալայն կերպով... ոչ մի եկեղեցու, ոչ մի անգամ այս ընտրութիւններէ ժամանակ, ժողովուրդը իրան թող չը տեսցնէ մի որ և է անկարողութիւն, մի որ և է անվայել քայլ:

Պատճառը հասկանալի է: Մեր ժողովուրդը գիտէ յարգել կանօնը, գիտէ յարգել իր սրբավայրը, գիտէ պատկառել եկեղեցուց, և այդ պատճառով նա իրան միշտ պահում էր տակաւով և վայելուչ կերպով:

Եւ եթէ մի քանի տեղ պատահեցին աղմուկներ, անկարողութիւններ, միակ պատճառը նախալուստիւններն էին: Մի տեղ նախագահողը զըրկուում է ծխականին ձայնից, երկրորդ տեղը՝ սուտ ծխական է ներս բերում, երկրորդ տեղը փորձում է փակել ժողովը և փակել, չորրորդ տեղը ինքը ղեկավարելու փորձում է գցում, որ առիթ գտնի ժողովը փակելու... և այդ բոլորը տեսնելով, ժողովուրդը վրդովուում, համբերութիւնից դուրս էր դալիս:

Եւ մեր խաւարամիտ օրգանները, որոնց փեշակն է ստել, կեղծել, խաբել, փոխանակ այդ փաստը արձանագրելու, իրանց թող տեսցին մի ամբողջ շարքով սուտ, չինձու և ամենախայտառակ բաներ գրել ժողովուրդի մասին... Իբրև թէ հարկն են, ծեծել են, աղմուկ են հանել:

Մենք բողոքում ենք այդ անամօթ ստախոսութեան դէմ: Թող ցոյց տան զէ՞ք մի հատ դէպք: Եւ այդ ողորմելիները կարծում են, թէ այդ տեսակ ստեղծող այդ տեսակ անամօթ ստեղծող կարող են համոզել որ և է մէկին, թէ ճշմարիտ ժողովուրդը իրան վատ է պահել, և անկարողութիւններ գործել:

Ով կը հաւատայ: Ժողովուրդը վաղուց դադարել է ձեռն հաւատարմաց: Ինչու. որովհետեւ ձեր ամեն մի սասածի տակը մի ուրիշ նենգութիւն կայ: Հաւատացե՛ք, եթէ մի օրասեք, թէ արեգակը արեւելքից է ծագում... էլի չեն հաւատայ...

Մեզ հարցնում են ամեն կողմից:—Երբ պէտք է վերընտրութիւններին վերջ լինի:

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԽԱՆՈՒՄԻՏՆԵՐԻ ԲԱՆԱԿԻՆ

Պարոններ, դարձեալ պէտք է խօսե՛ք...

Կիրակի օրը վերջապէս բռնկեցիք և վատ բռնկեցիք... Տէր իմ Աստուած. դուք չէ՛ք, որ այս խօսքերն էլք գրում:

«Մեր կողմը նոյնպէս մի գողցված թշուառական պահանջում է (ազդեանք) երկասարդից խոտացած ապառիկը: Եւ այս բոլորն ընտրողներն են, զինուորներ և դրանց զորավարներն են Արասխանանցներ, Մարտիաններ, Գարոններ, և այլն: Վերջիններին մենք չենք ինչոյում, բայց ժողովուրդը, ժողովուրդը...» (Արձագանք) № 70):

Եւ այն, և այն...

Բառական է, ամսիս 26-ին, ս. Նշան եկեղեցու բակում՝ այնտեղ դռնված ամբողջ հայ հասարակ-

կութիւնը պարզ տեսաւ, թէ ով է այդ ստոր միջոցներից օգուտ քաղողը, թէ ով է որում Ալեքսանդրեան պարտիզում «բոսայա կամանդա» անուանված տարրը և ով է նրանց փողեր բաժանում... անամօթներ...

Գիմեցէ՛ք սր դատարանին էլ ուղում էք և մենք կը հաստատուք, որ ձեր նկարագրած բոլոր կեղտոտութիւնների հերոսները դուք էք և մի միայն դուք...

Մեր ձեռքում անհերքելի փաստեր կան և մենք կարող ենք ճշմարտութեամբ ապացուցանել այդ: Միայն սրբալից ցուցեցինք, որ ձեր կեղծ ծխականների ցուցակը վաւերացրած տեսանք սրբազան առաջնորդի ձեռքով, որին դուք սխալմունքի մէջ էք գցել... Ս. Նշան եկեղեցու տեղ-Յակովը քահանայի նոր ծխականների պատմութիւնը մեզ յայտնի է իր բոլոր մանրամասնութիւններով... Այդ քահանայն, ամսիս 19-ի ընտրութիւններին ներկայացրած ցուցակի մէջ, մուծել էր 60 ծխական, իսկ այս մի շարքովայ մէջ, կամ աւելի ուղիղն ասած՝ մի գիշերվայ մէջ, այն է ամսիս 26-ին, շարքով օրը, գիշերվայ ժամը 10-ից յետոյ, այդ թիւը դարձրել էր 92...

Քաջութիւն ունեցէ՛ք պնդելու, որ դուք, պարոններ, դրամով ծխականներ չէք որսել և մենք փաստերով կը հաստատենք ձեր բոլոր քայլերը...

Գուք, պարոններ, ձեռն համար փեշակ էք դարձրել ձեր լրագրողներում: այս կամ այն ինչ մարդու անունը կեղտոտելու, յարմարելով հանգամանքներին:

Ձեզ հարկաւորվեց այս շարքին, ի միջի այլոց, և իմ անունը ամենայն տեսակ կեղտ կպցնել. մենք գիտէինք ձեր փորձագետ, և գիտէինք ձեր ներկայական օրէնքը. ձեզ համար ամենայն միջոցներով էր, միայն թէ նպատակին հասած լինէ՛ք, այն է՝ ինձ կիրակի օրը ընտրված չը տեսնէք: Ես լռեցի մինչև ընտրութիւնը, որպէս զի չը կարծէի, որ ես ինձ արդարացում եմ միմիայն նրա համար, որ ընտրվեմ:

Գուք ամենայն միջոց դործ դրէք, որ ձեր թեկնածուներն անցնեն, բայց ինչ չհասցիք. մտ հարկը ընտրողական ձայնից ևս ստացայ 63, իսկ դուք, ողորմելիք, կարողացաք որսալ ամենաչափ 29 ձայն ձեր առաջին կանդիդատ Յակովը Տէր-Յովհաննիսեանի համար...

Հասարակութիւնը շատ լաւ դիտէ, թէ ինչպէս էր արտաքրված («Արձագանք» № 71) Գ. Միրզոյեանը Ներսիսեան զպրոցից: Գ. Միրզոյեան մի մեծ ուկոյր դարձաւ. Եւսեփորեանների, Բէհրութեանների, Աբիմաններին և այլոց բողաղէ համար, և այդ ուկոյրը դրանք հեշտութեամբ չը կարողացան կուլ տալ: Ինքը Վեհապետը, անցեալ դեկտեմբեր ամսին ջըն-նելով Միրզոյեանի դատը, համոզվեց, որ յիշխալ հոգաբարձուները, կուրացած կուսակցական ուղով, թող չէին տուել իրանց աններելի կամայականութիւն և Վեհապետը վճռեց... պատու իր կայ մեծան ան փոքր և ոչ ոք աբարձութեանը սեպտեմբերից վերադարձնել ինձ իմ պաշտօնը: Ձեք հաւատում. դիմեցէ՛ք էլ միամիտ և ձեռն այնտեղից կը գրեն, որ դա փաստ է:

Եր այս զարդոցները լաւ մտաւոր մտնող են մատակարարում նոր սերունդին: Այնչափ վարձապետներ, վարժուհիներ, ուսումնականներ և գիտնականներ են պատրաստում տարուց տարի այս բազմաթիւ զպրոցները, որ կարելի է կարծել, թէ այստեղ պէտք է լինի մի չափազանց խոշոր խումբ շրջմով ուսումնականների (պրոցեսորներ): Սակայն այդպէս չէ: Խիստ քիչ կը պատահի, որ մի մարդ կամ մի կին, որ բան գիտէ ու ծոյլ չէ, առանց գործի մնայ:

Ձը նայելով երկրի անբերրի վիճակին, Ֆինլանդացիները հասկացել են փոյտից, քարից, խոտից, երկաթից, ջրից, շոգուց, քամուց և ուրիշ շատ բաներից այնպիսի գործադրութիւններ աշխուժացնելու համար, որ ամենքի համար էլ գործ ու զբաղմունք կայ:

Պաշտօնները միշտ մրցմամբ են տրվում խնդրողներին: Վարչական պաշտօնները, մինչև վերջին թաղը աւելող ծառայի պաշտօնն էլ, երբ տեղը բացվում է, իսկոյն հրատարակվում է, թէ այս ինչ տեղը թափում է, ուղղող թող խնդրէ: Եւ պատահում է, որ մի տեղի համար 20, 30, 60 խնդիրք է դալի՝ փաստելով վկայականներով: Քննում են, տեսնում և նշանակում արժանաւորագուցին: Նոյն իսկ մասնաւոր գործերում գործա-

դուք անամօթարար հաւատացնում էք, որ ես այնչափ անընդունակ զանվեցայ, որ վաճառված լինելով զպրոցից, ամբողջ երեք տարի մնացի առանց պարապմունքի... Ողորմելիներ: Ով չը գիտէ, թէ դուք որպիսի ճարտիկութեամբ ամբողջ երկու տարի ձգձգում էլք իմ գործը, ինձ դանազան կօմբինացիաներ առաջարկում. մէկ օր մինչև անգամ, նոյն իսկ ձեր հոգաբարձական վճար համաձայն, կանչեցիք ինձ զպրոց, որ ես և միւս ուսուցիչները դատեր մի կերպով յարմարեցնենք... Ով չը գիտէ, որ վերջերս, աւելի քան մի տարի «Աղբիւր» և «Տարազն» էի նուիրվել և բացի մեր աշխատանքը, ես իմ կողմից երեք հազար բոլբոլց աւելի ստիպված եղայ վրան դնելու: Թէ ինչ պատճառով ես և իմ ընկերն հեռացանք այդ հրատարակութիւններից, դրա դատարար չէ կարող լինել Արզար Յովհաննիսեան, այլ իբրև դատարար իր ժամանակին հրաւիրվեցին մեր կուսակցից հրապարակախօսներ: Գիցուք հէնց երեք տարի անցործ եմ մնացել, դրա մասին գոնէ դուք լռէ՛ք: Յիշեցէ՛ք, երբ պ. Սեդրակ Մանուկեան, որին դուք «հայոց եղակի մանկավարժ» էք անուանում, հայոց զպրոցներից դուրս մնաց, քանի քանի տարի անցործ մնաց, մինչև որ նա ըստիպվեց, հաղարարու բուրի ուսձիկ ստանալուց յետոյ, ամսական 60 թէ 75 բուրիով հայոց բեմի սցենարիւտին, թէ հայոց դերասանական խմբի ղեկավարի պաշտօնը յանձն առնելու: Պ. Յովհաննիսեան, ով պատասխարեց փոխադարձ կրեդիտային ընկերութեան մէջ, ողորմելի ուսձիկով, ճեմարանից արձակված ձեր կուսակցի ուսուցչին, մինչև կարողացաք նրան ներս կուխել Ներսիսեան զըպրոցն: Վերջինս, նոյն իսկ ձեր հեշտակարար կատանդին Բէհրութեանը՝ բանկից վաճառվուց յետոյ՝ քանի տարի է թափառում առանց գործի: Պարոններ, համոզվեցէ՛ք վերջապէս, որ հասարակութիւնը Քարամանեաններին, Արզարների աշխուժ չէ նայում մարդկանց վրա... Գուք վաղուց ճանաչված էք:

Գարբիէ Միրզոյեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

Յունիսի 13-ին

Յունիսի 12-ին Գարբաղի թեմական զպրոցում կայացաւ տարեկան հաշեռութեան հանդէսը: Գահիճը լի էր և հասարակութեան մի մասը ոտի կանխած էր կողքի սենեակներում, տեղի սակաւութեան պատճառով: Առաջնորդը, հիւանդութեան պատճառով, բացակայում էր:

Տեսուչ Լ. Սարգսեանի կարգադրած հաշից երեւաց, որ 1893—1894 ուսումնական տարվայ ընթացքում զպրոցում կային 406 աշակերտներ, ամբողջ թիւով հայոց եկեղեցական-ծխական զըպրոցներում սովորողների համարեա կէսը: Ուսումնական տարվայ սկզբում, տեղի սակաւութեան պատճառով, չեն ընդունվել 120 հոգի, մտնելու ցանկութիւն յայտնածները 480/6: Պ. տեսուչը այդ չարիքի առաջն առնելու համար մի միջոց էր առաջարկում. կամ ընդարձակել զպրոցի շինութիւնը, տարվո նրան այն սենեակները, որ խլված

էին 1889 թւին, կամ եկեղեցիների բազերում միջանկյան ծխական զպրոցներ պահել:

Սեմինարիական դասընթացը աւարտեցին 5 հոգի: Աւարտողների այդ սակաւ թիւի վրա կանգ առնելով՝ տեսուչը բացատրեց այն ընդհանուր պայմանները, որոնց շնորհով մեր բոլոր սեմինարիաների բարձր դասարանները սակաւամարդ են:

Սեմինարիաների խոշոր թիւութիւններից մէկն էլ համարելով այժմ գործութեան ունեցող ծրագրիները, ցոյց տուեց, թէ որչափ անհրաժեշտ է և քահանայի համար ընդհանուր զարգացումը. ընդհանուր զարգացուցիչ աւարկանների դաստանդութիւնը ոչ միայն չը պէտք է կրճատվի սեմինարիաներում, քանի որ այժմ էլ նրանք համեմատաբար քիչ տեղ են բռնում, քան հարկաւոր է, այլ ընդհակառակն:

Մանկավարժական ժողովը զըպրոցները 1893—94 ուսումնական տարում կարելի է համարել շարունակութիւն և ընդարձակումն անցեալ ուսումնական տարվայ գործունէութեան: Այս տարվայ զըպրոցներից զլիւսաւորն էր սեմինարիաների նոր ծրագրի պրոէկտի մշակութիւնը:

Գարբոցում այս տարի, բացի աշակերտների ուրոշ տարադից, մտցրած են և զլիւսաւորներն ինչպէս:

Գարբոց այս տարի ունեցել է ղեկատու աղքատ աշակերտների համար և սեփական բժիշկ, որը շարքով մի անգամ այցելել է զպրոցը: Ֆիզիկական զարգացման գործում զպրոցի մանկավարժական ժողովը կողմնակից է եղել անգլիական սիստեմին—խմբական բացօդայ խաղերին:

Գարբոցում այս տարի իրականութիւն է դառել ուսուցչական փոխառու խնայողական զանձաբանի խնդրը:

Գարբոցի ֆիզիկական կարիքները, բնագոյտական ժողովածու և զրադարանը շարունակել են հարստանալ, թէ և հոգաբարձութիւնը զըպրոցական նպաստ չէ կարողացել տալ: Ֆիզիկական կարիքները ունի 91 իր, ընդամենը—105, զրադարանը—798 հատոր և 364 ա. գիրք: Մանաւանդ աչքի ընկնող նուէրներն են՝ պ. Յ. Արամանի ուղարկած 200 բուրիով ձեռք բերած մարդկազգայական մողէները և պ. Ս. Գէմուրեանի կոնցերտից ստացած 151 բուրիով զնած Ֆիւ-հարմօնիան:

Գարբոցի քառաձայն խումբը, որը բաղկացած է եղել 50 հոգուց, ստացել է նուէրներ 195 բ.: Այդ դուռարի մի մասով ձեռք են բերված, մանկավարժական ժողովի որոշմամբ, աղքատ աշակերտների համար հազուադաս, դասարանական պիտոյքներ և զեղորայք:

Ուսուցչական խումբը, բացի կրօնուսույցից և վերակացուից, կազմված էր 12 հոգուց, որոնցից 4-ը համալսարանական են, 2-ը Ալեքսանդրեան ուսուցչական խնամարանից աւարտած, 2-ը Ներսիսեան զպրոցից աւարտած, 1-ը Վեհապետի Ռաֆայէլեան վարժարանից աւարտած, 3 էլ միամտի ճեմարանից աւարտած:

Ուսուցչական խմբի պահպանութեան տարեկան ծախս է եղել 10,850 բ.:

Կ.

վերաբերում է Ֆինլանդիայի թէ հողին, թէ լեռնաբեր, թէ աղբին, թէ իրանց կարգերին ու օրէնքներին—բոլորն էլ սուրբ է սրանց համար: Գուցէ, բացի Նալանդիայից, չը լինի ամբողջ աշխարհում մի աղք կամ մի երկիր, ուր օրէնքը և կարգ ու կանօնը այնքան յարգվելիս լինեն, ինչքան այստեղ: Որինապահութեան զգացումը խիստ խոր արմատներ է գցել ֆինլանդացու մէջ: Իրանց աղքատ սիրում են չափից դուրս: Բայց պէտք է խոստովանել, որ այդ ազգասիրութիւնը ոչ կեղծառութեամբ է, ոչ ցոյց, ոչ էլ ունայն փառասիրութեան համար: Նրանք, որոնք կարողութիւն ունեն, մեծ դուռարներ են տալիս աղքատին այլ և այլ նպատակներով և մեռնելիս էլ մեծ մեծ դուռարներ են կտակում ընդհանուրի օգտին: Կարելի չէ երևակայել որ և է տեսակի զպրոց, որի կարիքը զգացվի և այստեղ չը գտնվի: Համալսարան, պոլիտեխնիկում, նաւագնացների և լոցմանների զըպրոց, հանքարանական և իրաւաբանական զպրոցներ, ձեռագործական զպրոցներ, արհեստանոցներ, զիննաղիւտներ, բէսակական զպրոցներ, 5, 4, 3, 2 դասարաններով ժողովրդական զպրոցներ, սեմինարիաներ, երաժշտական խնամարան, վաճառականական զպրոցներ, խուլուսուցիչներ, կոյրերի, իղիտանների զպրոցներ և այլն և այլն: Բո-

լոր այս զարդոցները լաւ մտաւոր մտնող են մատակարարում նոր սերունդին: Այնչափ վարձապետներ, վարժուհիներ, ուսումնականներ և գիտնականներ են պատրաստում տարուց տարի այս բազմաթիւ զպրոցները, որ կարելի է կարծել, թէ այստեղ պէտք է լինի մի չափազանց խոշոր խումբ շրջմով ուսումնականների (պրոցեսորներ): Սակայն այդպէս չէ: Խիստ քիչ կը պատահի, որ մի մարդ կամ մի կին, որ բան գիտէ ու ծոյլ չէ, առանց գործի մնայ:

Երում են այս մրցման եղանակը: Պէտք է տեսնել, որ այս կերպով պաշտօնը միշտ յարմար և ընդունակ անձեր է գտնում: Ինչամոթիւն և ազգականութիւն այստեղ ոչինչ նշանակութիւն չունեն: Սրանք չը գիտեն կաշառք ինչ բան է. ոչ կանան և ոչ կը տան: Եթէ մէկը մի այդպիսի բան անէ, ամբողջ երկիրը նրան կը խայտառակէ: Երկրի կամ քաղաքների եկամուտներից մի կօպէկ չի աւտի մէկը, կամ ուղէ էլ՝ չէ կարող ուտել: Սուտ հաշիւներ կարելի չէ հնարել: Անցեալները մի սենատոր կառավարութեան հրամանով պէտք է ճանապարհորդել, և նա փոխանակ պատային կառքով գնաւու, ծովով էր գնացել: Սենատորը դեռ իր ճանապարհը չը վերջացրած՝ լրագրիները փոթորիկ բարձրացրին այդ մասին, և նա վերադառնալով՝ զանգատ տուեց լրագրիների դէմ, բայց դատարանը արդարացրեց լրագրիներին: Եւ ինչ էք կարծում, ընդամենը 150—200 բուրիւ հարց էր, և սենատորն ասում էր, թէ մտադիր էր վերադարձնելու:

Ամեն մարդ իրաւունք ունի հսկելու, թէ ինչպէս են ծախսվում երկրի ընդհանուր եկամուտները, որովհետեւ ամեն զք, առանց բացառութեան, թէ բարձր, թէ ստորին պաշտօնեայ, ծառայ թէ հոգեւորական, աշխարհական, թէ զինու-

րական պարտաւոր է իր ստացուածքից և իր եկամուտից հարկ վճարել: Պրոֆեսոր, սենատոր, վաճառական, գնեկալ ամենքն էլ հարկ են վճարում այստեղ: Կովկասցիները համար մի անհաւատալի բան կերեայ, եթէ ասենք, որ այստեղի գնեկալ-հասանազապետն էլ է իր ուսձիցը հարկ վճարում:

Բայց այս տարի մի աւելի տարրինակ բան պատահեց: Ֆինլանդիայում կարգ կայ, որ գնահատող պաշտօնեաները առաջ որոշում են այս կամ այն անձի եկամուտը և նրա համեմատ էլ նրա վճարելիք հարկը. իսկ եթէ մէկը գժգժ լինի զընհանատողներից, կարող է զանգատվել ըստաբային ժողովին, որը ճննութիւն է նշանակում: Ամեն տարի դժգոհներ լինում են: Բայց այս տարի դժգոհների թուումն է և Ֆինլանդիայի կառավարչապետ գնեկալ Հայդէնը, որի զանգատը արգար գտան և նրա մեծ վճարելիքը 80 բուրի իջեցրին:

Եւ ինչպէս չը ծաղիկ մի այսպիսի երկիր:

Ա. Ա.

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէ՛հրան, յունիսի 6-ին

Քարեհանգեղէն մի անկիւն շնորհել մեր ներկայ գրութեանը ձեր լրագրի մէջ:

Քաղաքիս հայկական նորակազմ երաժշտական ընկերութիւնը, որի միակ նպատակն է երաժշտական գիտութիւնը տարածել իր շրջանի երիտասարդութեան մէջ, որ յայտնապէս պէտք է մաքրուէ այն ամեն խոչնդոտներէ զէ՛մ, որ խաւարը և նախապաշարները հանած են այդ հիւսնալի գիտութեան ծաւալման առաջ, շտապում է յայտնելու իր շնորհակալութիւնը Ուսումնասիրաց ընկերութեան և մանաւանդ նրա լուսամտի տեսնապետին՝ ժեներալ ասպետ Կ. Պաղերկիանեանին, որ չէր զղացան ընձեռելու ամեն տեսակ կարևոր օգնութիւն իրանց սաներից կազմված այդ ընկերութեանը:—որպիսիք են ընկերացի, ծառայ, առժամանակեայ կահ կարասիք և այլն:

Ապա յայտնում է իր շնորհակալութիւնը նաև մեհ. Շահի երաժշտական ժեներալ Լըմէլին, որը մարդասիրաբար իր անմիջական նկողնութեան տակ առաւ այդ խումբը և չէր խնայեց ոչ մի ջանք այդ ընկերութեան կազմակերպելու խնդրում:

Ընկերութիւնս այժմ բաղկացած է 27 անդամից և յուսելի է, որ շուտով լրանայ իր որոշ թիւը և ունի մի ամբողջ խմբի (orchestre) համար պէտք եղած բոլոր գործիքները, որոնք արժէ ևն ընկերութեանս համար 4100 դրան:

Ընկերութեանս մի մեծ ծառայութիւն արած կը լինի այն բարեմէր անձը, որ հաճի մեզ դրկել այն եւրօպական նօտաներից, որոնք պատկանում են հայկական աղբյուրի երաժշտութեան. խոստանում ենք կենտրոնական գրախճառանոցի միջոցով նրա արժէքը հասցնել ըստ պատկանելու, հանդերձ մեր կրկին և կրկին շնորհակալութեամբ երաժշտական ընկերութեան տնօրէն՝

Վ. Մեսրոպեան
Քարտուղար՝ Վ. Բժշկեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Լըմէլիանցի, որ Թիֆլիսում տեղի ունեցած պատգամաւորական ընտրութիւնները մեծ տպագորութիւն են գործել այնտեղ: Ինչպէս երևում է, դաւաճանքում ևս մեծ ուշադրութեամբ հետեւում են այս ընտրութիւններին: Մեզ դիմում են նոյն իսկ հեռագրով, հարցնելով ընտրութեան հետանգնների մասին:

Այս օրերս Թիֆլիս է եկել Մօսկովայի համալսարանի պրօֆէսոր Չուպրով: Նրա նախկին աշակերտները մտադիր են պատուել իրանց պրօֆէսորին մի ընկերական ճաշկերպով:

Կիրակի օր, յունիսի 26-ին, Թիֆլիսի երեք եկեղեցիներում տեղի ունեցան պատգամաւորական լրացուցիչ ընտրութիւններ: Էջմիածնից օգնողները ընտրվեցին, ձայների անհաշիւ առաւելութեամբ՝ բժ. Ե. Աղամալեան, Ասատուր Յարութիւնեան և Գեորգ Մուրադեան: Ս. Նշան եկեղեցում՝ նոյնպէս ձայների անհաշիւ առաւելութեամբ՝ Գաբրիէլ Միրզոյեան, Գաբրիէլ Շաղինեան և Պօղոս Կանդուբաբեան: Ս. Հրեշտակապետաց եկեղեցում, որի ընտրութիւնը բեկնված էր և նշանակված էր նոր ընտրութիւն, էլի ձայների անհաշիւ առաւելութեամբ ընտրվեցին՝ Օնանջան Գրիգորեան, Յովակիմ Տէր-Մինասեան, Սարգիս Գանիէլեան: Հակառակորդ կուսակցութեան բոլորը կանխատեսները երեք եկեղեցիներում էլ սեւացան, ստանալով շատ աննշան ձայներ:

Վերջին օրերս, «Բաբի» լրագրի խօսքերով, Բագում շատ են հիւանդանոցում ստամոքսային հիւանդութիւններով, մանաւանդ մանուկները:

«Տարազ» շաբաթաթիւթում կարդում ենք հետեւեալ տողերը. «Անցեալ կիրակի, քաղաքիս բնակիչ 23 հայ եկեղեցիներում նշանակված էր ծխական պատգամաւորների ընտրութիւն, որ վերջիններս էլ Ներսիսեան դպրանոցի համար հոգաբարձուներ ընտրեան: Քսան և երեք եկեղեցիներից 19-ում ընտրութիւնները կատարվել են կանոնաւոր, իսկ մնացեալ չորս եկեղեցում, շնորհիւ անկարգութեանը, ընտրողների և նախազանցների քմահաճութիւնների՝ չէ կայացել ընտրութիւն: Առաջաճութիւնները՝ չէ կայացել ընտրութիւն: Առաջաճութիւնները (Մշակական) կուսակցութեան թեկնածուներից ընտրված են 39 հոգի, իսկ հակառակ

բանակից՝ 17 հոգի: Բացի այդ, հակառակ բանակի ընտրված թեկնածուներից ոմանք, հէնց իրանք ապօրինի են համարում իրանց ընտրվելը և հրավայել միջոցներով են նրանք մասնակցում ընտրութիւններին: Հակառակ բանակից հրաժարողներից է, ի միջի այլոց, այնպիսի պ. Գր. Խղմիրեան, Ներսիսեան դպրանոցի կանոնադրութիւն կազմողներից մէկը:»

Քարեգործական ընկերութեան կազմում տեղական ճիւղի վարչութիւնը խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Վարչութիւնը ստացել է «Մշակի» խմբագրութեան կողմից մայիսի 9-ին, մայիսի 21-ին, յունիսի 4-ին և յունիսի 9-ին յօդուտ սովեալների ուղարկած 100-ական բուլլէթ, ընդամենը 400 բուլլէթ: Քարեգործական ընկերութեան խորհրդից ապրիլ ամսի 26-ին ուղարկած 200 բուլլէթ, և վարչախմբից, զղարկելի պ. Միքայէլ Զօհրաբեանի հանդանակած և ուղարկած 100 բ.,—ընդամենը 700 բուլլէթ: Յիշեալ գումարը շարունակ ծախսվում է կերակրելու գաղթականներին, որոնց թիւը ներկայումս հասնում է մօտաւորապէս 300 հոգու:»

Շուշում, Քարեգործական ընկերութեան հրատարակութեամբ, լոյս տեսաւ մի գրքոյի «Հայր» վերնագրով, որ թարգմանել է «Миръ Божіа» ամսագրից պ. Ղուկեթիսայեանց: Գինն է 3 կոպէկ:

Կովկասեան Քարեգործական ընկերութեան կարծի ճիւղի վարչութիւնը ուղարկել է մեզ հետեւեալը. «Մշակի» խմբագրութիւնից յունիսի 4-ից և 9-ից յօդուտ գաղթական-սովեալների ուղարկած մի մի հարիւրական բուլլէթ, ընդամենը 200 բուլլէթ, վարչութիւնս ստացաւ, որի համար յայտնում է իր խորին շնորհակալութիւնը յարգելի խմբագրութեանը և մեծաբոյ նուիրատուներին:»

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 21-ին թեմական դպրոցի հոգաբարձական ժողովը ստանում է Այվազեան եպիսկոպոսից հետեւեալ գրութիւնը. «Եյս իմ իրաւունքով հրատարակում եմ ուսուցչական այժմեան խումբը տեղի հետ հեռացնել և հրավայել նոր խումբը: Հոգաբարձուները, ի հարկէ, մերժում են: Այդ առիթով հոգաբարձութիւնը երկէ հեռագրով դիմեց միջոցներ: Երբ այդ անախորժ լուրը տարածվեց քաղաքում, իսկոյն մի քաղմաստորակի բողոքով դիմեցին Էջմիածնի՝ Վ. հափառին, հեռագրով, խնդրելով, որ այդ մասին խիստ ճիւղի շնչանակէ: Եպիսկոպոսի այդ առաջարկը տարօրինակ է, քանի որ այժմեան ուսուցչական խմբի շնորհիւ, թեմական դպրանոցը ծաղկած դրութեան է հասել:»

ԳԵՐՈՒՄՅՑ, պ. Յովհաննէս Գանիէլեան խնդրում է մեզ տպագրել հետեւեալը. «Մշակի» № 54-ի մէջ տպագրված էր մի թղթակցութիւն Զանգեզուրի գաւառի մի մասում տեղի ունեցող աւազակութիւնների մասին, որ և արտասպեց «ԿԱՅԱՅԱՅ» լրագրի: Խնդրում եմ յայտնել, որ այդ թղթակցութիւնը գրողը ունի հետ: Տպագրելով այդ երկտողը, յայտնում ենք, որ այդ թղթակցութիւն գրողը բոլորովին այլ մարդ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՆՈՒԳԻՐՆԵՐ ԿԱՐՆՈՒ ԹԱՂԱՍՆ ԶԱՆԴԻՍԻ ՄԱՍԻՆ

Պարիզում ծաղիկների պակասութիւն է գզացվում, և ծաղիկներ բերել են տալիս գաւառներից ու արտասահմանից:—Ուսաց դեսպանութիւնը վարդերի մի գեղեցիկ պսակ դրեց կարնօի դազաղի վրա:—Ստրասբուրգի օրիորդները ուղարկեցին մի շքեղ պսակ, որ դարարված է Ստրասբուրգ քաղաքի զինարջով:

Տները Պարիզում զարդարված են սզաղբույններով: Պատուհաններում դրված են կարնօի կիսարձանները: Յուզարկաւորութեան հանդէսն անցնելու ճանապարհի վրա եղած տների պաշարումներ և պատուհանների համար հազարաւոր ֆրանկներ են վճարում: Բուլլիսների վրա ձեռքից ձեռք խլում են և առնում կարնօի պատկերները և կենսադրութիւնները: Հիւրանոցները լցված են: Ելիսեան պալատում, դազաղի մօտ կանգնած

են տանեակ հաղաբար մարդիկ: Հանգուցեալ նախագահի աճիւնի երկրպագելու համար եկած ամբողջ անհարթութեամբ սպասում է իր հերթին. շատերը լաց են լինում, արտասուքներ թափելով հանգուցեալ շքանշանների վրա:

Թագման նախընթաց օրից Ռիւօլէ և Champs Elisees փողոցները վրա ժողովրդեան անհղին բաղմութիւն է կանգնած: Շատերը ամբողջ գիշերը չեն քնել, որպէս զի կարողանան տեսել թագման հանդէսը: Առաւօտեան 7 ժամից սկսեցին պատգամաւորներ դալ Ելիսեան պալատը:

Ստացված է մի շքեղ պսակ Թագաւոր Կայսրից հետեւեալ վերնադրով. «Ալէքսանդր III—նախագահ Կարնօին: Ժողովուրդը հիացմունքով ողջունեց Թագաւոր Կայսրի պսակը: Առաւօտեան 8 ժամից արդէն սկսեցին տեղեր բռնել՝ հանդէսը տեսնելու համար: 10 ժամին եկաւ նախագահը Ելիսեան պալատը, նրան շնորհ կերպով ողջունեցին ամեն կողմից: Յուզարկաւորութեան հանդէսն սկսվում է:

Ուսաց դեսպանի հետ միասին գնում է գնեւերալ Օրբուէլէ: Յուզարկաւորութեան հանդէսը հասնում է «Notre Dame» տաճարին 12 1/2 ժամին: Եղանակը հրաշալի է: Պատկերը նոյնպէս է և նկարչական: Կտուրները և ծառերը վրա հազարաւոր հանդիսատեսներ են կանգնած: Քաղաքում անաղին շարժում կայ:

Պարիզը սղի քաղաքի է փոխարկված: Օտարներ ին հոսանքը անաղին է: Բացի հիւրանոցներից, մասնաւոր տներն ևս լցված են: Ելիսեան պալատից մինչև Պանտօնը ժողովուրդը պատի պէս կանգնած է: Միլիոնաւոր հանդիսատեսները ուղեկցութեամբ, նրա ետեւից գնում են՝ սենատորները և պատգամաւորները: Բազմաթիւ պատգամաւորներ եկած են Ֆրանսիայի ամեն անկիւններից: Հազարաւոր պսակներ են դրված կարնօի դազաղի վրա: Պէրիէի պսակը տանում են չորս մարդ, սղի շրեր հագած: Աւստրիական կայսրի պսակը կրում է այս վերնադիրը. «Նախագահ Կարնօին—Ֆրանց-Յովէպի կայսր և թագաւոր: Վիկտորիա թագուհին, ի նշան խորին յարգանքի դէպի հանգուցեալ նախագահը, մի շքեղ պսակ է ուղարկել: Կան պսակներ Ումբերտո թագաւորից, Բէլգիայի Լէօպոլդ թագաւորից, սենատից, պատգամաւորների ժողովից, Պարիզ քաղաքից: Բոլոր դիպլոմատները, առանց բացառութեան, ներկայ են: Լրագրիչները հաղորդում են, որ կարնօի թագման հանդէսն ներկայ էին մօտ 1 1/2 միլիոն մարդիկ: Չը նայելով դրան, ոչինչ անկարգութիւններ չկային:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՆՈՐ ՕՐԵՆԲ

Անդլիական լորդերի ժողովում այս օրերս ընկնում էր մի բիւլ, որով պահանջվում է, որ այրիացած մարդը կարողանայ պակսվել իր հանգուցեալ կնոջ քրոջ հետ, և այդպիսի պսակը օրէնքով վաւերական ճանաչվի:

Համայնքների ժողովը, յարմարվելով անդլիական հասարակութեան մէջ տիրապետող պահանջներին, արդէն տաան և մէկ անգամ է, որ ընդունում է ամուսնական օրէնքների մի այդպիսի լրացումն, այսինքն նպատակայարմար է համարում, որ այրի պսակվել կարողանայ իր մեռած կնոջ քրոջ հետ: Այդ հարցին վերաբերեալ բիլլը ստացրց տարի սխտանադրութեամբ առաջարկվում է: Բայց վերջին տարիները սովորութիւն է մտել առաջարկել այդ բիլլը անմիջապէս լորդերի ժողովին, որը արդէն տասներեքորդ անգամ մերժում է այդ բիլլը: Նոյն վիճակին ենթարկվեց բիլլը և լորդերի ժողովը վերջին նիստերից մէկում: Սակայն այդ բիլլը մի գեղեցիկ պսակ դրեց կարնօի դազաղի վրա:—Ստրասբուրգի օրիորդները ուղարկեցին մի շքեղ պսակ, որ դարարված է Ստրասբուրգ քաղաքի զինարջով:

Տները Պարիզում զարդարված են սզաղբույններով: Պատուհաններում դրված են կարնօի կիսարձանները: Յուզարկաւորութեան հանդէսն անցնելու ճանապարհի վրա եղած տների պաշարումներ և պատուհանների համար հազարաւոր ֆրանկներ են վճարում: Բուլլիսների վրա ձեռքից ձեռք խլում են և առնում կարնօի պատկերները և կենսադրութիւնները: Հիւրանոցները լցված են: Ելիսեան պալատում, դազաղի մօտ կանգնած

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հոսմից «Times» լրագրին հեռագրում են, որ խաւիսան մտադրութիւն ունի առաջարկել պետութիւններին միջազգային հակողութիւն ունենալ անարխիստների վրա և մի կենտրոնական բիւրօ հաստատել՝ տեղեկութիւններ հաւաքելու համար նրանց մասին:

—«Femps» լրագրից հաղորդում է, որ կարնօի դազաղի վրա դրվել են մօտ մէկ միլիոն արծողութեամբ ծաղիկներ:

—Ֆրանսիական մինիստր-նախագահ Գլուպիւի իր ամբողջ մինիստրութեամբ հրաժարական ներկայացրեց հանրապետութեան նախագահին: Պարիզից ստացված հեռագրից հաղորդում են, որ նոր մինիստրութեան կազմվել առաջ յանձնվեց Բիւրօին: Աւելորդ չենք համարում մի քանի տեղեկութիւններ հաղորդել այդ քաղաքական գործիչի մասին: Պ. Բիւրօ հարաւոր է (լիսնցի): Ուսում է առել Ecole Normale դպրոցում: 1870 թ-ի պատերազմի ժամանակ աչքի ընկաւ որպէս քաջ զինուոր և Պատաւոր Լէգիօնի շքանշան ստացաւ: Պատերազմը վերջանալուց յետոյ, փառաւոր կերպով քննութիւն տուեց վերոյիշեալ դպրոցում և սկզբում նուիրեց իրան փիլիսոփայութեան դասատուութեանը դասաւանդան լիցենցիոս: Կատարելապէս տիրապետելով անգլիական լեզուին, նա շատ աջող թարգմանեց անգլիական փիլիսոփայ Սպենսերի մի քանի հեղինակութիւնները և փիլիսոփայութեան ուսուցիչ հրատարակեց Louis le Grand լիցենու: Յայտնի Պօլ Բէր ուշադրութիւն դարձրեց տաղանդաւոր երիտասարդի վրա և նրան իր դիւանատան դիրկտորնշնանակեց: Գրանից յետոյ լիցենցիները Բիւրօին պատգամաւոր ընտրեցին և նրանից յետոյ քաղաքականութիւնը նրա կեանքում առաջին դերը սկսեց խաղալ: Պ. Բիւրօ ուշադրութիւն դարձրեց Ֆինանսական հարցերի վրա և շուտով յայտնի եղաւ, որպէս փորձված ֆինանսիստ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ատէրսոնի նորերս հրատարակված «Համալսարանական Օրացոյցի» մէջ, 1894 թ-ի համար, տպագրված են տեղեկութիւններ դերմանական համալսարանների և ուսանողների մասին: Գերմանական բոլոր համալսարաններում ձմեռվայ սեմեստրում կային 27,689 ուսանողներ:

Ֆրանսիական հանրապետութեան նորընտիր նախագահ Պէրիէ շատ հարուստ մարդ է. նրա կարողութիւնը հասնում է 40 միլիոնի: Կաղիմիր Պէրիէի ցեղում խոշոր կապիտալիստներ շատ են եղել: Կաղիմիր Պէրիէ պսակված է իր ազգականուհու հետ և ունի մի գինեաղիստ դաւալ և մի 14 տարեկան աղջիկ:

ՄՇԱԿԻ ՀԵՈՒԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՍԱԹԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐՈՒԳ, 24 յունիսի: Պետական բանկի նոր կանոնադրութիւն է հրատարակված:—Յունիսի 19-ից մինչև 23-ը Պետերբուրգում խօսքայով հիւանդացան 80 հոգի, մեռան 20:

ՎԻԵՆՆԱ, 24 յունիսի: Ունգարական երկրագործութեան մինիստրութեան հաղորդած տեղեկութեան համեմատ, ցորենի և հաճարի պտղաբերութիւնը դոնէ 150-ով պակաս կը լինի անցեալ տարվանից:—Խօսքայի տարածման առաջն տեսնելու համար, ներքին գործերի մինիստրը հրամանագրեց սանիտարական քննութեան ենթարկել Ռուսաստանից եկող ճանապարհորդներին:

ՊԵՏԵՐՈՒԳ, 25 յունիսի: Հրատարակված է անցադրային նոր կանոնադրութիւն:

ՄԱՐՍԷ, 25 յունիսի: Երէկ այստեղ տնային խուզարկութիւններ տեղի ունեցան 40 անարխիստների մօտ. 11 անարխիստների կալանաւորված են. նրանցից 9-ը խտայացիներ են և 2 ֆրանսիացի: Նրանց մօտ գտնված թղթային ապացուցանում են, որ ֆրանսիական անարխիստները յարաբերութիւն ունեն օտարերկրեայ անարխիստների հետ:

ԼՕՆՊՈՆ, 25 յունիսի: Լորդերի ժողովն ընդունեց առաջին ընթացքում ժամանակ Սոլըբրի առաջարկած բիլլը, որով թոյլ է տրվում արդէն չքատու, ապուշ, խելագար և փտանգաւոր կամ վարակիչ հիւանդութիւններ ունեցողներին Անգլիա գալը, նոյնպէս թոյլ է տրվում կառավարութեանը սքստրիլ այն օտարահպատակներին, որոնք սպանում են պետութեան հանցագործութեանը կամ կարող են նպաստել յանցանքներ գործելու թէ Անգլիայում, և թէ արտասահմանում:

ՊԵՏԵՐՈՒԳ, 25 յունիսի: Հիւսիսային երկրի երկաթուղիական դժբերը ներքին նահանգները հետ

